

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԿԱՆՉ
«Վստահությունն ու հույսը ճգնաժամային պայմաններում»
միջազգային գիտաժողով
2026 թ. հունիսի 22-23
Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ), Երևան

Գիտաժողովը կազմակերպել է
ՀԱՀ-ի Հանրային հարցերի բարոյագիտության կենտրոնը (ԷԹԻԿԱ)՝

Փիլիսոփայական միությունների միջազգային դաշնության (ՓՄՄԴ),
Հայոց փիլիսոփայական ակադեմիայի
և
Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ)
հետ համագործակցելով:

Հայաստանի ամերիկյան համալսարանում ԵՀՏ ամբիոնի վարիչ, [պրոֆեսոր Մարիա Բաղրամյանի](#) ղեկավարությամբ գործող, «Հորիզոն Եվրոպայի» կողմից ֆինանսավորվող [Հանրային հարցերի բարոյագիտության կենտրոնն](#) (ԷԹԻԿԱ) իր երկրորդ միջազգային գիտաժողովը կիրականացնի 2026 թ. հունիսի 22-ին և 23-ին՝ Երևանում: Գիտաժողովի թեման է՝ «Վստահությունն ու հույսը ճգնաժամային ժամանակներում», որը համապատասխանում է ԷԹԻԿԱ ծրագրի հետազոտական ուղղությանը: Գիտաժողովն անց է կացվում [Փիլիսոփայական միությունների միջազգային դաշնության](#) (ՓՄՄԴ), [Հայոց փիլիսոփայական ակադեմիայի](#) (ՀՓԱ) և [Երևանի պետական համալսարանի](#) (ԵՊՀ) համաֆինանսավորմամբ:

Գիտաժողովը հետազոտում է վստահության և հույսի բնույթի ինչպես նաև դրանց փոխկապակցվածության վերաբերյալ փիլիսոփայական հարցեր՝ հատուկ ուշադրություն դարձնելով հանրային և անձնական կյանքի այս հիմնարար տարրերի վրա տնտեսական, սոցիալական և քաղաքական ճգնաժամերի ազդեցությանը:

Հրավիրում ենք ներկայացնել 300-500 բառանոց ամփոփագրեր՝ 20 րոպեանոց զեկույցի (և 10 րոպե հարցուպատասխանի) համար: Ամփոփագրերը կարող են լինել անգլերեն կամ հայերեն և կարող են վերաբերել գիտաժողովի ընդհանուր թեմային առնչվող հարցերի, ինչպիսիք են հետևյալը.

- Ինչպե՞ս են փոխկապակցված վստահությունն ու հույսը:
- Կարո՞ղ է լինել վստահություն առանց հույսի, թե՞ հույսը միշտ ներառված է վստահության մեջ:
- Արդյո՞ք հույսն անհրաժեշտ նախապայման է ճգնաժամային պայմաններում վստահության համար:
- Կա՞ արդյոք ճգնաժամի ժամանակ հույսը չկորցնելու բարոյական կամ սոցիալական պարտականություն:
- Հուսալքությունը բարոյական կողմ ունի՞:
- Ճգնաժամային պայմաններում վստահելը կամ հուսալը ռացիոնա՞լ է:

- Ինչ ազդեցություն ունի ճգնաժամային պայմաններում ապրելը՝ վստահության և հույսի մակարդակների վրա: Հանրային և անձնային վստահությունն այս տեսանկյունից տարբերվում են:
- Ճգնաժամի պայմաններում վստահությունը չարդարացնելն արդյո՞ք բարոյական առումով ավելի վատ է քան սովորական ժամանակներում, թե՞ ճգնաժամի պայմաններում վստահությունը չարդարացնելն ավելի ներելի է:
- Հույսն ու վստահությունը զարգացման ենթական իմացական կամ բարոյական առաքինություննե՞ր են, թե՞ մարդուն ներհատուկ հատկանիշներ:
- Ինչպե՞ս է հույսը տարբերվում ցանկալին իրականի տեղ ընդունելուց, և արդյո՞ք ճգնաժամային պայմաններում այդ տարբերությունը խամրում է:
- Ի՞նչ են բացահայտում ճգնաժամերը՝ վստահության փխրունությունը, թե՞ դիմացկունությունը: Կարո՞ղ են արդյոք ճգնաժամերը ստեղծել համերաշխության նոր ձևեր, որոնք կհանգեցնեն ավելի մեծ վստահության և հուսադրության:
- Վստահության և հավատքի միջև որևէ կապ կա՞: Ինչպիսի՞ կապ կա՝ հատկապես ճգնաժամային պայմաններում:

Գիտաժողովը բաց է նաև այն զեկույցների համար, որոնք վերաբերում են նշանավոր փիլիսոփաների աշխատանքներին՝ գիտաժողովի թեմայի շրջանակում:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն անգլերենն ու հայերենն են: Սիրով կընդունենք այս լեզուներից ցանկացածով ամփոփագրեր և զեկույցներ: Նախատեսում են գիտաժողովի որոշ նյութեր հրապարակել «ԷԹԻԿԱ. Բարոյագիտության և հանրային հարցերի տարեգրքում»:

Առավելագույնն ութ կրթաթոշակ մրցույթային կարգով կտրամադրվի ֆինանսավորման այլ աղբյուրներ չունեցող արտասահմանցի երիտասարդ հետազոտողների՝ գիտաժողովի ընթացքում Հայաստանում բնակության և կեցության ծախսերը հոգալու համար:

Անանուն ամփոփագրերը Word ձևաչափով պետք է ուղարկել etica@aua.am հասցեին: Վերնագրում պետք է նշել Trust and Hope: Գիտաժողովը կանցկացվի միայն առկա ձևաչափով, առցանց զեկույցումների հնարավորություն չի տրվի:

Ամփոփագրերը հանձնելու վերջնաժամկետը հետաձգվել է մինչև 2026 թ. հունվարի 30-ը: Լրացուցիչ հարցերի համար խնդրում ենք նամակ ուղարկել etica@aua.am էլ. փոստին: